1702ի Զատիկը կ'անցընէ Երուսաղէմ, բայց Ամդեցի չի յիշեր թէ ո՛րքան մնաց վանքին մէջ ու ե՛րբ դարձաւ Կ. Պոլիս։

Տէր Կոմիտաս գացած է նաև Քէօթահիա, ինչպէս պիտի տեսնենք քիչ վերջ։

Ս. Աթոռոյս Ջեռագրաց Մատենադարանին մէջ կը պահուի Տէր Կոմիտասի մէկ աշխատասիրութիւնը (թիւ 1234), մանր նոտրգիր, ընդօրինակուած Երուսաղէմի մէջ ՌՃՄՀ (= 1699) թուին, ձեռամբ Սիլիստրացի Մատթէոսեան Ճաչատուրի, ի վայելումն Գրիգոր վարդապետի Ծամթեցւոյ։ Ձեռագրին մեծութիւնն է 18 × 12,5 սմ. ու կը բազկանայ 48 բաց դեղնագոյն ոզորկ թուղթերէ։ Դատարկ են՝ թղ. 1, 2ա, 46բ, 47, 48։ Բովանդակութիւնն է, երեք սիւնակներու վրայ, Յունաց և Հայոց և Հռոմայեցւոց տարեկան տօներու բազդատական ցուցակը կամ, հեղինակի բառով, «Հաւա-

---

նայ. եղիցի՛ եղիցի» (թղ. 275բ)։ Ուրիշ առիթով մը Յովհաննէս Ս. Գէորգ եկեղեցիի բեմէն հրապարակաւ կ'այպանէ հռոմէադաւանութիւն ընդունողները. 1691 փետր. 14, Տճառն-ընդառաջ. «Երեկոյս քարոզ (խօսեցաք) եւ ի դաս քաչեցաք զֆռանկ լինօղքն» (թղ. 143ա)։ Դարձեալ՝ 1700 Մարտ 16. «Գնացի ի պատարագն (ի Ս. Գէորգ). ոմն ֆռանկի պէս չոքեր էր պատարագին. գաւազանաւ խթեցի զնա եւ բարկացայ իւրն» (թղ. 253ա)։

Այս մտայնութիւնը ունեցած են այն տեղի կաթոլիկոսներէն ու պատրիարքներէն ոմանք, այն է՝ քրիստոնէական լայնախոհութեամբ և առաւելապէս քաղաքական նպատակներով քաղցր ու սիրալիր յարաբերութիւններ մշակել Հռոմէական եկեղեցիին հետ, նոյն ատեն չզոհելով Հայ եկեղեցիի անկախութիւնը ու հաւատարիմ մնալով անոր ուղղափառ դաւանութեան։ Այս մասին շատ ուշագրաւ է Մելքիսեդեկ Գառնեցիի՝ թուղթ կաթոլիկամիտ կարծուած այդ կաթոլիկոսի պատասխանագիրն առ Պաւղոս ե. պապն Հռոմայ (տե՛ս Հ. Ն. Ակինեան, **Մովսէս Գ. Տարեւացի**, էջ 317-320)։